В нынешнем виде МИТ была образована 22 июля 1965г. Теперь эта структура европеизирована, тесно сотрудничает со спецслужбами США. С 1992 по 1998гг. ее шефом даже был бывший дипломат Сонмез Коксаль, первый гражданский руководитель спецслужбы. Шеф MIT напрямую отчитывается премьер-министру. Штаб-квартира МИТ находится в Анкаре. По данным газеты *Milliyet*, в 1999г. бюджет МИТ составил 78,5 триллионов лир (278 млн. долл.). Это больше выделенного в 1998г. на 61%.

Сегодня в зону ответственности МИТ входят борьба с коммунистическими и ультраправыми движениями, а также сепаратистами - курдами (как внутри страны, так и за ее пределами) и армянами. Самым большим успехом МИТ считается захват лидера Рабочей партии Курдистана Абдуллы Оджалана, за которым агенты спецслужбы охотились 14 лет. Он был схвачен поздно ночью 15 февраля 1999г. в столице Кении Найроби в резиденции греческого посла в Кении группой турецких коммандос.

Однако старые привычки остались. Продолжают ходить упорные слухи о связях МИТ с террористическими организациями - в том числе и с ультра-правой группировкой «Серые волки». Кроме того, военные традиционно играют большую роль в политической жизни страны. И офицеры МИТ - отнюдь не исключение. Как и у нас, они считают себя носителями отдельной идеологии - смеси патриотической тоски по временам Оттоманской империи и принятой у всех спецслужб мира страстью к наведению порядка.

В результате руководству страны приходится постоянно балансировать между интересами собственного офицерства и интересами своих соседей.А после 11 сентября 2001г. делать это становится все сложнее.

Дело в том, что в операции в Афганистане Вашингтон отвел Турции совершенно особую роль. По специальному приглашению США еще в октябре 2001г. 90 бойцов турецких спецподразделений были отправлены на помощь Северному альянсу. Ставка была сделана на узбека Абдул Рашид Дустума (получившего весной 1997 года убежище в Анкаре после изгнания из Мазари Шарифа), его же поддерживают США и Узбекистан. Иран же совместно с Россией и Индией в 90-х поддерживал Бархануддина Раббани, Ахмад Шах-Масуда и Мохаммада Фахима, занимающего ныне пост министра обороны в правительстве Карзая.

В результате летом этого года Турции пришлось пойти на неожиданный шаг. 17 июня президент Турции Неджет Сезер, находясь с официальным визитом в Тегеране, подписал с иранским лидером Мохаммадом Хатами меморандум о развитии двустороннего сотрудничества в военной области и по каналам спецслужб. Через день начальник Генштаба турецкой армии Хусейн Кыврыкоглу вместе с сирийским коллегой Хасаном Туркмани поставил свою подпись под договором о военном сотрудничестве между двумя странами. Таким образом, Турция, главный партнер США и Израиля в регионе, почти одновременно подписала два соглашения стратегического характера с двумя основными противниками собственных союзников - Ираном и Сирией.

При этом следует помнить, что турецкий генералитет, в том числе и в МИТ, традиционно выступает против исламской идеологии, поддерживая тесные связи с Вашингтоном и Иерусалимом.

## *Игры патриотов*

***Шеф МИТ Шенкал Атасагун***

Высшее офицерство МИТ не может расстаться и еще с одной старой привычкой - мечтой переиграть наши спецслужбы. Россия и Турция - давние соперники, воевавшие друг с другом много раз. И, видимо, главная проблема взаимоотношений спецслужб двух стран - то, что и у турецкой, и у российской разведки слишком длинная память.

В результате обе страны уже много десятилетий являются заложниками конспирологических планов влияния друг на друга. Как мы, так и они входим в зону взаимных интересов. Как в российских, так и в турецких спецслужбах помнят былые времена великих империй. И тратят огромные ресурсы на то, чтобы добиться достаточно призрачной цели - подчинить друг на друга своему влиянию.

С начала 90-х российская контрразведка не устает повторять - турецкая разведка поддерживает сепаратистов и ведет у нас подрывную деятельность. Агентов МИТ ловили в Чечне (например, вфеврале 2000г. при выходе из Грозного был задержан гражданин Турции Али Йаман). Их ловили на юге России (6 апреля 2001г. УФСБ по Ставропольскому краю заявило о том, что ее сотрудники разоблачили двух турецких разведчиков) и на севере (в мае 2001г. из Челябинска за пределы России выдворен ряд граждан Турции, подозреваемых в работе на турецкие спецслужбы). Официальные представители турецких спецслужб наводнили бывшие республики Советского Союза - от Азербайджана и Узбекистана до Грузии.

Кроме того, Турция, явно не самая богатая страна в мире, тратит большие средства на развертывание по всей России огромного числа турецких школ и турецких культурных центров - от Ростова до Новосибирска. Причем не всегда с безобидными целями. Например, в мае прошлого года в Ростове-на-Дону была приостановлена деятельность подобного центра, так как местные контрразведчики выяснили, что его посетители изучали там идеи радикальной исламской организации «Нурджулар», которая выступает за создание единого тюркского государства - Великого Турана, в границы которого должно войти и несколько регионов юга России. Кроме того, выдворен за пределы России один из руководителей этого центра гражданин Турции Алдырмаз Неджати, который, по данным ФСБ, «собирал информацию для турецких и других иностранных спецслужб».

19 апреля 2001 г. в ФСБ заявили, что российская контрразведка располагает данными о причастности турецких спецслужб к захвату парома «Аврасия» в январе 1996г. и угону самолета Ту-154 в Саудовскую Аравию в марте 2001г.

Российские спецслужбы в свою очередь точно также пытаются разыгрывать карту сепаратизма в Турции, поддерживая курдов. Еще в 1947г. вооруженные отряды курдов под командованием муллы Мустафы Барзани, отступая под натиском иранских войск, появились на территории Азербайджана. Для переговоров с Барзани срочно вылетел Павел Судоплатов - главный диверсант СССР. Из мемуаров Судоплатова известно, что «разработанный по

поручению министра госбезопасности Игнатьева план заключался в том, чтобы сформировать из курдов специальную бригаду - полторы тысячи человек - для диверсионных операций на Ближнем Востоке».

И за прошедшие полвека в курдской политике России мало что изменилось, только теперь главным врагом курдов является не Иран, а Турция. Так, в конце ноября 1999 года турецкое информагентство «Анатолия» сообщило, что турецкие спецслужбы арестовали командира Курдской рабочей партии Кемиля Байика. Его обвинили в том, что он использовал контакты в России для закупки оружия и амуниции для продолжения вооруженной борьбы против Турции (правда, российские эксперты с подозрением относятся к сообщениям «Анатолии»). Не стоит забывать и о «невероятных приключениях Оджалана в России», а также обнаруженных российскими журналистами лагерях подготовки курдских боевиков в Ярославской области.

## *Спецназ*

### *Турецкий спецназ научился отлично действовать в горах*

В Турции существуют в основном армейские спецподразделения. Это три бригады Коммандос и морской спецназ: SAS (*Su Alti Savunma - противодиверсионный спецназ)* и SAT (*Su Alti Taaruz -боевые пловцы*).

1-ая бригада Коммандос базируется недалеко от Кайзери *(Kayseri).* Недавно бригада была развернута в юго-восточной Анатолии против террористов. 2-ая бригада коммандос базируется в Болу. Она также была развернута в районе юго-восточной Анатолии для борьбы с террористами. В Вооруженных силах Турции также существуют спецподразделения горных егерей, которые используются для борьбы с курдскими повстанцами. Бригада морской пехоты базируется под Измиром. Их задача -проникновение на территорию противника, осуществление диверсий и сбор разведданных.

Спецподразделения Турции принимают участие в подготовке своих коллег из аналогичных структур Казахстана, Грузии, Азербайджана и Узбекистана.

За пределами страны турецкий спецназ действует не только в Афганистане. Так в 1950г. впервые 4,5-тысячный турецкий воинский контингент был направлен в Корею. Последняя акция подобного рода прошла в 1999г., когда в Косово в составе сил КФОР были переброшены около тысячи турецких военнослужащих.

### *Госдеп США обвинил некоторые страны ЕС в поддержке рабочей партии Курдистана*

По мнению Государственного департамента США, некоторые страны Европейского Союза оказывают поддержку рабочей партии Курдистана(РПК), которую Турция и США считают террористической организацией.

По крайней мере, в 8 странах КРП беспрепятственно осуществляет свою деятельность, говорится в докладе госдепа Country Reports on Terrorism 2007. В тексте доклада упоминаются Австрия, Бельгия, Кипр, Дания, Франция, Италия, Швеция и Швейцария. На территории этих стран активисты КРП имеют возможность беспрепятственно и безнаказанно вести свою деятельность, заявляют американские эксперты. В частности отмечается, что в столице Бельгии действует несколько телевизионных студий, принадлежащих РПК. На территории этой страны также собираются финансовые средства для деятельности партии. В Дании ведет трансляцию принадлежащий курдам канал Рож-ТВ.

В банках Кипра есть счета, принадлежащие членам РПК, отмечается в докладе и указывается, что именно здесь замыкаются основные финансовые каналы организации. Во Франции, Италии, Швеции и Швейцарии представители КРП могут безнаказанно вести активную социальную, пропагандистскую и образовательную деятельность, отмечается в докладе

***Израиль хочет продать Турции спутники-шпионы***

Глава военного ведомства Израиля Эхуд Барак во вторник прибудет с двухдневным рабочим визитом в Турцию для обсуждения с ее руководством вопросов двустороннего политического, военно-технического сотрудничества и ситуации на Ближнем Востоке, передают турецкие СМИ.

В Анкаре намечены переговоры Барака с президентом, премьером Турции, главами МИД, национальной обороны и начальником Генштаба. В центре внимания, как ожидается, будут предложение Тель-Авива к Анкаре приобрести спутники-шпионы на 300 миллионов долларов, а также реализация контракта по поставкам турецким ВВС десяти беспилотных летательных аппаратов «Херон» (Heron) на 200 миллионов долларов, сообщает телекомпания CNN-Turk со ссылкой на дипломатические источники.

Соглашение по беспилотным аппаратам было подписано несколько лет назад, однако с их поставками возникли задержки в связи с выявлением брака видеокамер самолетов. Технику планируется использовать для сбора разведывательной информации о курдских боевиках, базирующихся в Северном Ираке.

Турецкие СМИ обращают внимание на то, что Барак впервые посещает в Турцию после того, как возглавил военное ведомство Израиля.

Турция и Израиль являются стратегическими союзниками в регионе. Официальная Анкара неоднократно предлагала свое посредничество в урегулировании арабо-израильского конфликта.

***www.agentura.ru***

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Թուրքական խորհրդարանի հանձնաժողովն ապրիլի 16-ին հավանություն տվեց այն նախագծին, ըստ որի՝ փոփոխությունների պետք է ենթարկվեն Քրեական օրենսգրքի (ՔՕ) 301-րդ և 305-րդ հոդվածները:

301-րդ հոդվածն ասում է.

1. Այն անձը, ով «հրապարակավ կվիրավորի թուրքական ազգը, հանրապետությունը կամ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ)», կբանտարկվի 0.5-3 տարով:
2. Այն անձը, ով «հրապարակավ կվիրավորի Թուրքիայի Հանրապետության կառավարությանը, պետական դատական հաստատությունները, զինված ուժերը կամ անվտանգության ուժերը», կբանտարկվի 0.5-2 տարով:
3. Եթե թուրքական ազգի հասցեին հրապարակավ արված վիրավորանքը հասցվում է արտասահմանում գտնվող թուրքական քաղաքացու կողմից, ապա դրա համար նախատեսված վերոնշյալ պատժաչափն ավելանում է 1/3-ով:
4. Հոդվածը չի տարածվում իշխանության հասցեին արված քննադատական արտահայտությունների վրա:

305-րդ հոդվածով նախատեսված է հետևյալ պատժամիջոցը. «Այն քաղաքացին, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն անձնական շահ ունի օտարներից ու օտար կառույցներից և գործում է հիմնական ազգային շահերի դեմ, ազատազրկման է ենթարկվում 3-10 տարի ժամկետով»:

Թուրքիայի խորհրդարանը 2008թ. ապրիլի 30-ին ութժամյա քննարկումներից հետո հավանություն տվեց երկրի ՔՕ ուղղումներին, համաձայն որոնց՝ փոփոխության ենթարկվեց 301-րդ հոդվածը: Նոր ուղղումները հետևյալն են.

1. Հանցագործություն է համարվում «թուրքական ազգին» հասցված վիրավորանքը: Նախկինում դա վերաբերում էր «թուրքականությանը» (թուրքական ինքնագիտակցությանը) հասցված վիրավորանքին:
2. Առավելագույն պատիժը 3-ից կրճատվեց մինչև 2 տարի ազատազրկման, ինչը հնարավորություն է տալիս բանտարկությունը փոխարինել դատավճռի իրագործման հետաձգման պայմանական ժամկետով: Բացի այդ, ամբողջովին վերացվեց այն հատվածը, որով նախատեսված էր պատժաչափի ավելացում 1/3-ով, եթե մեղադրյալը տվյալ հանցագործությունը կատարել է Թուրքիայի սահմաններից դուրս:
3. Այս հոդվածով յուրաքանչյուր քրեական գործ պետք է հարուցի միայն արդարադատության նախարարը:

Միևնույն ժամանակ, 305-րդ հոդվածի բովանդակությունը մնաց անփոփոխ, պարզապես օրենքի այս հոդվածը խախտած անձանց հետապնդումը պետք է իրականացվի ոչ թե արդարադատության նախարարի, այլ երկրի նախագահի թույլտվությամբ:

Խորհրդարանի նիստի ընթացքում, որը սկսվեց 20.30-ին և ավարտվեց 04.35-ին, ԹԱՄԺ-ում օրենքի փոփոխման օգտին քվեարկեց 250, դեմ՝ 65 խորհրդարանական: Արդարություն և զարգացում կուսակցությունը (ԱԶԿ), որը գերիշխող դիրք է զբաղեցնում 550 հոգանոց մեջլիսում[1],

[1] Ներկայումս ԹԱՄԺ կազմն ունի հետևյալ պատկերը. ԱԶԿ - 340 մանդատ, Ժողովրդա-հանրապետական կուսակցություն (ԺՀԿ) - 98 մանդատ, Ազգային շարժում կուսակցություն (ԱՇԿ) – 70 մանդատ, Դեմոկրատական հասարակություն կուսակցություն (ԴՀԿ) - 20 մանդատ, Դեմոկրատական ձախ կուսակցություն (ԴՁԿ) - 13 մանդատ, անկախ կուսակցականներ – 5 մանդատ, թափուր տեղեր – 2,

միակն էր, որ կողմ քվեարկեց ուղղմանը: Ընդդիմադիր կուսակցությունները դեմ քվեարկեցին: Դա պայմանավորված էր նրանով, որ ընդդիմությունը դժգոհ էր ԱԶԿ-ից, քանի որ վերջինս զիջումների է գնում ԵՄ-ին՝ ցանկանալով դառնալ դրա լիիրավ անդամ:

Որպեսզի ուղղումն օրենքի ուժ ձեռք բերի, այն պետք է հաստատվի երկրի նախագահի կողմից:

Մայիսի 8-ին նախագահ Աբդուլահ Գյուլը հաստատեց 301-րդ հոդվածում կատարված փոփոխությունները: Դա բնական է, քանզի Գյուլը երկրի նախագահի պաշտոնում առաջադրվել է հենց ԱԶԿ-ի կողմից:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դևիսը հայտարարել է, թե Թուրքիայի ՔՕ 301-րդ հոդվածում կատարված փոփոխությունները վկայում են այն մասին, որ թուրքական իշխանությունները պատրաստ են վերանայել երկրի օրենսդրությունը՝ հաշվի առնելով երկրի պարտավորությունները որպես ԵԽ անդամի և Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի մասնակցի:

Ներկայումս շատերը Եվրոպայում ուրախությամբ են ընդունում այս նորությունը, սակայն դա չպետք է դիտարկել որպես էական դրական փոփոխություն: Սա պետք է դիտարկել ընդամենը հասարակության դեմոկրատացման ուղղությամբ կատարված փոքրագույն մի քայլ[1]: Սա էական ազդեցություն չի թողնի թուրք-եվրոպական հարաբերություններում: Սակայն այդքանը բավարար կլինի, որպեսզի Եվրոպայի մոտ ամրապնդվի կարծիքը, թե Թուրքիան էապես պետք է փոխի իր քաղաքական համակարգը, եթե ցանկանում է միանալ Եվրամիությանը: Ընդհանուր առմամբ, եվրոպական հասարակությունը ողջունում է թուրքական նախաձեռնությունը, սակայն հազիվ թե այն հանգեցնի տվյալ հարցում ԵՄ-ի կողմից իրականացվող ճնշման նվազեցմանը: Հարկ է նշել, որ 301-րդ հոդվածի վերացման հարցն այժմեականություն ձեռք բերեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցի քննարկումների ժամանակ: Թուրքիան բազմիցս խոստացել էր փոփոխել ՔՕ 301-րդ հոդվածի բովանդակությունը:

Թուրք քաղաքագետ Օզջան Թիքիթի կարծիքով՝ Թուրքիայում իրենց մտքերի ու համոզմունքների համար մարդկանց հետապնդումը հակասում է դեմոկրատական ու մարդկային արժեքներին, ինչի պատճառով էլ քաղաքացիները կորցնում են պետության նկատմամբ հավատը: Թիքիթը հայտարարել է. «Թուրքական 301-րդ հոդվածի նման հոդված գոյություն ունի նաև Իտալիայում, պարզապես այդ երկրում, ի տարբերություն Թուրքիայի, մարդիկ իրենց մտքերի ու համոզմունքների համար չեն հետապնդվում»:

Հարկ է նշել, որ սկսած 2006 թվականից՝ թուրքական օրենսդիրները 8 անգամ փոփոխել են 301-րդ հոդվածի բովանդակությունը: Չնայած դրան՝ այս հոդվածը նախկինի նման լրագրողների, գրողների ու մշակութային գործիչների համար շարունակում է մնալ խոսքի ազատության գլխավոր խոչընդոտը: ԵՄ-ը բազմիցս կոչ է արել Թուրքիային չեղյալ հայտարարել 301-րդ հոդվածը, որով «թուրքերի ազգային արժանապատվությունը» վիրավորելու համար քրեական պատասխանատվության են կանչվել 2007թ. հունվարի 19-ին սպանված հայազգի լրագրող Հրանտ Դինքը[2], նրա որդին՝ «Ակոս» թերթի խմբագիր Արատ Դինքը[3],

---

Ազատություն և համերաշխություն կուսակցություն (ԱՀԿ) - 1 մանդատ, Մեծ միասնություն կուսակցություն (ՄՄԿ) - 1 մանդատ: Խորհրդարանականի մահանալու կամ զոհվելու պարագայում նրա տեղը թափուր է մնում մինչև հաջորդ ընտրությունները:

[1] Եվրոպական չափորոշիչներին մոտենալուն ուղղված ևս մեկ քայլ է համարվում այն հանգամանքը, որ ՔՕ-ում կատարված նոր փոփոխության համաձայն պատիժ նախատեսված չէ ամուսնական դավաճանության համար:

[2] Հրանտ Դինքն ասել է. «Մի ժողովուրդ, որ 4000 տարի ապրել է իր հարազատ հողի վրա, այդ ժողովրդին թեկուզ ոսկե օդանավերի մեջ դնես ու ապահով տեղափոխես մեկ ուրիշ վայր, դարձյալ դա ցեղասպանություն է, քանզի այդ ժողովրդին արմատից են կտրել, էլ չեմ ասում 1,5 միլիոն անմեղ մարդկանց զազանաբար ոչնչացումը»:

[3] 2007թ. «Ակոս» թերթում հրապարակել է Հրանտ Դինքի հետ անցկացված հարցազրույցը, ուր Դինքն արծարծում է Հայոց ցեղասպանության թեման:

Նոբելյան մրցանակի դափնեկիր, գրող Օրհան Փամուկը[1], կին գրող Էլիֆ Շաֆաքը[2], պատմաբան Թանըր Աքչամը[3], գրող, հրատարակիչ Ռագըփ Զարաքօլուն[4] և շատ ուրիշներ:

Վերջին 5 տարիներին Թուրքիայում 301-րդ հոդվածով 6745 քաղաքացու նկատմամբ գործ է հարուցվել, որոնցից 745-ը դատապարտվել են: Տասնյակ թուրք գրողներ դատապարտվել են 301-րդ հոդվածով՝ Օսմանյան կայսրությունում 1915թ. Հայոց ցեղասպանության մասին հրապարակավ արտահայտվելու համար: Դատական հետաքննության համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ նրանք կասկածի տակ են դրել թուրքական պատմության պաշտոնական տարբերակը և Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 1.5 միլիոն հայերի զանգվածային սպանությունները որակել են ցեղասպանություն, ինչն էլ տարբերվում է հայերի զանգվածային սպանությունների վերաբերյալ պետական թույլատրելի կարծիքից: Սակայն 301-րդ հոդվածով դատապարտման հիմքերը չեն վերաբերում միայն Հայոց ցեղասպանությանը. օրինակ, կին գրող Իփեք Չալըշլարի դեմ 301-րդ հոդվածով գործ էր հարուցվել այն բանի համար, որ նա «բոլոր թուրքերի հայր» Քեմալ Աթաթուրքի կնոջ մասին իր գրքում պատմում է այն մասին, թե ինչպես է Քեմալը, կանացի զգեստ հագնելով, թաքնվել մարդասպաններից: Այդ դրվագն ընկալվել է որպես Աթաթուրքին վախկոտության մեջ մեղադրելու փորձ, ինչի հետևանքով էլ 301-րդ հոդվածով գործ հարուցվեց գրողի նկատմամբ: Իսկ ահա պրոֆեսոր Աթիլա Յայլան Անկարայի համալսարանից հեռացվեց և ապա 301-րդ հոդվածով 15-ամսյա պայմանական ազատազրկման ենթարկվեց այն բանի համար, որ քննարկումներից մեկի ժամանակ իրեն իրավունք էր վերապահել ենթադրելու, որ Աթաթուրքի ժամանակ ստեղծված հանրապետությունը քաղաքական առումով այնքան առաջադեմ չէր, որքան ներկայացնում են այսօր:

Ընդդիմադիր Ազգային շարժում կուսակցության (ԱՇԿ) առաջնորդ Դևլեթ Բահչելին վարչապետ Էրդողանին առաջարկել էր հանրաքվե անցկացնել օրինագծի փոփոխման համար: Նշելով փոփոխության վերաբերյալ ժողովրդական կարծիքն իմանալու անհրաժեշտության մասին՝ Բահչելին ասել է. «Եթե դուք քաջ եք և իսկապես հավատում եք ժողովրդական կարծիքին, ապա հանրաքվեի նախաձեռնություն ցուցաբերեք»:

Ժողովրդա-հանրապետական կուսակցության[5] (ԺՀԿ) ներկայացուցիչը հայտարարել էր, որ տվյալ փոփոխությունները հակասում են երկրի Սահմանադրությանը: Ամենայն հավանականությամբ, նա նկատի ուներ այն, որ Սահմանադրության 35-րդ հոդվածով թուրք են համարվում բոլոր այն անձինք, ովքեր համարվում են Թուրքիայի քաղաքացիներ՝ անկախ էթնիկական պատկանելությունից:

Թուրքական խորհրդարանի հանձնաժողովում քրդական «Դեմոկրատական կարգ» կուսակցության ներկայացուցիչը պահանջում էր ոչ թե փոփոխության ենթարկել 301-րդ հոդվածը, այլ չեղյալ հայտարարել այն: Նա հայտարարել է. «Ես երբեք չեմ տեսել, որ այս երկրում երբևէ որևիցե մեկին գոնե մեկ անգամ դատապարտած լինեն քրդերին, լազերին,

---

[1] 2005թ. շվեյցարական հանդեսին տված հարցազրույցում Օրհան Փամուկը նշել է. «Այս հողում սպանվել են մեկ միլիոն հայ ու 30.000 քուրդ, և բացի ինձնից ոչ ոք չի համարձակվում խոսել այդ մասին»: 2006թ. սկզբին ԵՄ ճնշմամբ Փամուկի գործը կարճվեց: Հրանտ Դինքի սպանությունից հետո Փամուկը փախավ ԱՄՆ:

[2] 2006թ. ամռանը մեղադրվել է իր՝ «Ստամբուլի արտաամուսնական երեխան» («Հայրը և ապօրինածին երեխան») նովելում Հայոց ցեղասպանության մասին հիշատակելու համար: 2007թ. հունիսի 28-ին Թուրքական հրատարակիչների միությունը Շաֆաքին հանձնել է Խոսքի ազատության մրցանակը:

[3] 1970-ական թթ. Աքչամը Հայոց ցեղասպանությունն ընդունելու համար ստիպված եղավ հեռանալ Թուրքիայից: Ներկայումս նա Մինեսոթայի համալսարանի (ԱՄՆ) պատմության պրոֆեսոր է:

[4] «Բյոլգե» հրատարակչատան ղեկավար, թուրք հրատարակիչ Ռագըփ Զարաքօլուն 1990-ական թթ. հրատարակեց Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը: 2006թ. Զարաքօլուն որոշեց հրատարակել բրիտանական գրող Ջորջ Ջերջյանի «Ճշմարտությունը կարող է ազատել մեզ» գիրքը, որը նվիրված է Հայոց ցեղասպանությանը: Դրա համար նրան եռամյա բանտարկություն էր սպառնում: 2007թ. Զարաքօլուն արժանացավ «Մամուլի ազատություն - 2007» մրցանակին: Նույն մրցանակին արժանացել է նաև Հրանտ Դինքը (հետմահու):

[5] ԺՀԿ առաջնորդ, 70-ամյա Դենիզ Բայքալը 2008թ. ապրլի 27-ին, կուսակցության համագումարում, 10-րդ անգամ վերընտրվեց իր պաշտոնում՝ հնարավոր 1105 քվեներից ստանալով 1021-ը:

չերքեզներին վիրավորելու համար: Քրեական գործեր չեն հարուցվել նրանց նկատմամբ, ովքեր քրդերին համարում են «սատանայի ծնունդներ», իսկ հայերին վիրավորում են՝ օգտագործելով «հայկական վիժվածք» արտահայտությունը»:

Այսպիսի մոտեցում է ցուցաբերում նաև ոչ վաղ անցյալում Թուրքիայում ստեղծված «Ո՛չ ռասիզմին ու ազգայնականությանը» հասարակական շարժումը, որի ներկայացուցիչները կարծում են, թե 301-րդ հոդվածը, որը Թուրքիայում խոսքի ազատության գլխավոր արգելքն է, պետք է վերացվի:

Հայոց ցեղասպանության կտրվածքով, 301-րդ հոդվածի փոփոխությունն ավելի կընդլայնի թուրքական մտավորականության ներկայացուցիչների այն շրջանակը, որը հրապարակավ կխոսի այդ մասին: Դրանով Թուրքիայում ցեղասպանություն բառի վրա դրված թաբուն վերացնելու նախադրյալներ կստեղծվեն: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Հայոց ցեղասպանության վրա դրված թաբուի վերացումը ենթադրում է վերափոխել Թուրքիայի Հանրապետության պատմությունը, քանի որ և՛ Քեմալ Աթաթուրքը, և՛ նրա կողմնակիցների ու մերձավորների մեծ մասը եղել են հատուկ կազմակերպության ակտիվ գործիչներ: Այս պարագայում արդեն կբացահայտվի Հայոց ցեղասպանության գործում քեմալականների ունեցած անմիջական մասնակցությունը: Փաստորեն, դա անխուսափելիորեն կհանգեցնի նաև Քեմալ Աթաթուրքի գործունեության վերափոխմանը: Այս պայմաններում Թուրքիայում աննախադեպ կաճեն էթնիկական ու կրոնական խմբերի ինքնարտահայտման հնարավորությունները, իսկ դա կհանգեցնի միացյալ թուրքական ազգի պատրանքի փլուզմանը: Դրա համար էլ Թուրքիայի ՔՕ 301-րդ հոդվածը բխում է Թուրքիայի Սահմանադրության 66-րդ հոդվածից, որում նշված են Քեմալ Աթաթուրքի հետևյալ խոսքերը. «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է համարում»:

Հետաքրքիր է, որ Թուրքիայի ՔՕ 301-րդ հոդվածի առաջիկա փոփոխության մասին հայտարարելուց մի քանի ժամ առաջ Բրյուսելում հրապարակվեց ԵՄ ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Օլի Ռեհնի տարեկան զեկույցը: Ռեհնը Թուրքիային՝ որպես ԵՄ-ի անդամակցության թեկնածու երկիր, կոչ արեց գործադրել «զգալի ջանքեր»՝ ապահովելու խոսքի, դավանանքի ազատությունը և քրդական բնակչության իրավունքները: Ընդ որում՝ Ռեհնը հայտարարեց, որ Բրյուսելն Անկարայի հետ «Արդարադատությունը և մարդու իրավունքները» խորագրով բանակցություններ չի սկսի այնքան ժամանակ, քանի դեռ փոփոխության չի ենթարկվել ՔՕ 301-րդ հոդվածը: Ըստ էության, Թուրքիայում անսացին Ռեհնի ցանկություններին:

Այսպիսով, 301-րդ հոդվածի բովանդակության մեջ փոփոխություններ իրականացնելով՝ Թուրքիան ցանկանում է աշխարհին ապացուցել, որ երկիրը շարժվում է եվրոպական ժողովրդավարության չափանիշներին ընդառաջ: Իրականում ԵՄ պահանջը չկատարվեց. 301-րդ հոդվածը չվերացվեց, նշանակում է՝ թուրքական մտավորականությանը շարունակում է սպառնալ բանտարկության վտանգը, եթե նա հրապարակավ արտահայտվի Հայոց ցեղասպանության մասին կամ էլ կասկածի տակ առնի Աթաթուրքի արժանիքները: Միևնույն ժամանակ, պետք է խոստովանել, որ 301-րդ հոդվածի բովանդակությունում կատարված փոփոխությունները որոշակի առաջընթաց են, և տվյալ բնագավառում ցանկացած փոքր առաջընթաց ողջունելի է: Նման առաջընթացները հետագայում հնարավոր կդարձնեն թուրքական կառավարության կողմից 301-րդ հոդվածի արգելումը: Առայժմ, սակայն, 301-րդ հոդվածը թուրքական մտավորականության համար շարունակելու է հանդես գալ Դամոկլյան սրի դերում և մնալու է որպես Թուրքիայում խոսքի ազատության յուրօրինակ ցուցիչ:

*Հայկ Գաբրիելյան*

# ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ («DOING BUSINESS») ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ 2007-2008ԹԹ.[1]

*World Bank Group, International Finance Corporation*

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը *(International Finance Corporation)* «Ուորլդ բենկ գրուփ»-ի *(World Bank Group)* անդամ է և գտնվում է Վաշինգտոնում: Գործունեության հիմնական ոլորտն առնչվում է զարգացող երկրներում ազատ և մրցունակ շուկայական հարաբերությունների խթանման, ընկերություններին ու մասնավոր սեկտորին աջակցման, աղքատության նվազեցման հարցերին: Միջազգային ֆինանսական կազմակերպության անդամ է 179 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը (անդամակցել են նույն՝ 1995թ.):

## *«Doing business» նախագիծը*

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը, ֆինանսական տարբեր գործառույթներից զատ, *World Bank Group*-ի շրջանակներում վարկանիշային հետազոտություններ է իրականացնում տվյալ երկրի գործարարության *(Doing business)* մթնոլորտի լուսաբանման նպատակներով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վարկանիշային հետազոտություններն առաջին անգամ իրականացվել են 2004թ. սկսած: Հաշվետվությունները կազմվել են հիմնականում հետևյալ 10 ցուցիչների հիման վրա (նախորդ զեկույցներում, սակայն, կիրառված են ոչ բոլոր ցուցիչները).

1. գործարարության ձեռնարկում/ձեռնարկության հիմնում[2]
2. լիցենզավորում
3. աշխատուժի վարձակալում
4. սեփականության գրանցում
5. վարկավորում
6. ներդրողների պաշտպանվածություն
7. հարկերի վճարում
8. միջազգային առևտուր
9. պայմանագրերի իրագործում
10. գործարարության ավարտ/ձեռնարկության լուծարում

«Գործարարության» վերջին՝ 2007-2008թթ. վարկանիշային զեկույցներում է միայն կիրառվում յուրաքանչյուր ցուցիչին կցված և դրանք ամփոփող վարկանիշավորման մեթոդաբանությունը, իսկ նախորդ զեկույցներում տրվում են միայն թվային տվյալները: Ուստի, նպատակահարմար ենք համարում հիմնականում կենտրոնանալ վերջին զեկույցների վրա: Յուրաքանչյուր վարկանիշ կամ դիրք տատանվում 1-178 թվերի միջակայքում, լավագույն ցուցանիշը 1-ն է, վատագույնը՝ 178-ը (զեկույցներում ընդգրկված են 178 երկրներ): Աղյուսակներում ներկայացվելու են ոչ միայն յուրաքանչյուր ցուցիչին վերաբերող վարկանիշները, այլ նաև 10 ցուցիչների ընդհանրացված վարկանիշը (ընդհանուր վարկանիշը կոչվում է «գործարարության հեշտ իրականացում», որը ներկայացնում է 10 ցուցիչների միջինացված ու ամփոփող ցուցիչը կամ ցույց է տալիս տվյալ երկրի զբաղեցրած դիրքը):

---

[1] Կազմակերպության 2007 և 2008թթ. վարկանիշային հետազոտությունները հիմնված են համապատասխանաբար 2006 և 2007թթ. տվյալների վրա:

[2] Ցուցիչը ցույց է տալիս գործարարության պաշտոնական գրանցման համար անհրաժեշտ գործողությունների/միջոցառումների տևողության, ծախսերի ու նվազագույն ներդրումների չափաքանակը:

Աղյուսակ 1-ում ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ 2006թ. տվյալներով Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում գործարարության իրականացման վարկանիշում առաջատար դիրք է զբաղեցնում (46)՝ զիջելով միայն Վրաստանին (36): Վրաստանի ու Հայաստանի ցուցանիշները, ի տարբերություն ԱՊՀ մնացած պետությունների, ընդհուպ մոտենում են մերձբալթյան երկրներին: Հայաստանը գերազանցում է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրներին, ինչպիսիք են Հունգարիան (51), Բուլղարիան (54), Ռումինիան (55), Հունաստանը (95):

Հայաստանին իր վարկանիշով զգալիորեն զիջում է Ադրբեջանը, որը զբաղեցնում է 97-րդ հորիզոնականը: Նշենք նաև, որ Հայաստանի պարագայում նվազագույնը հարկերի վճարման ու միջազգային առևտրի ցուցիչներն են՝ համապատասխանաբար 137 և 133: Իսկ լավագույն արդյունքներն արձանագրվել են սեփականության գրանցման (2)[1], ձեռնարկության լուծարման (43), գործարարության ձեռնարկման (44), ինչպես նաև աշխատուժի վարձակալության (48) ոլորտներում: Հայաստանի արդյունքներն ըստ 10 ցուցիչների գերազանցում են Ադրբեջանի համապատասխան արդյունքները, բացառությամբ երկու՝վարկավորման և պայմանագրերի ձևակերպման ցուցիչների:

*Աղյուսակ 1*

*«Գործարարության» վարկանիշը 2007թ.[2], ԱՊՀ և մերձբալթյան երկրներ*

| երկիր[3] | դիրքը, ընդհ. | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***ԱՊՀ երկրներ*** | | | | | | | | | | | |
| Վրաստան | 35 | 39 | 27 | 11 | 36 | 12 | 19 | 14 | 2 | 29 | 21 |
| Հայաստան | 46 | 44 | 72 | 48 | 2 | 62 | 81 | 137 | 133 | 64 | 43 |
| Ղազախստան | 71 | 48 | 173 | 23 | 71 | 45 | 49 | 44 | 177 | 28 | 103 |
| Ղրղզստան | 88 | 45 | 150 | 75 | 7 | 62 | 32 | 153 | 176 | 31 | 131 |
| Մոլդովա | 90 | 87 | 157 | 87 | 45 | 94 | 96 | 119 | 118 | 17 | 78 |
| Ադրբեջան | 97 | 95 | 159 | 79 | 58 | 21 | 105 | 142 | 170 | 30 | 71 |
| Ռուսաստան | 112 | 45 | 172 | 102 | 44 | 156 | 81 | 126 | 155 | 19 | 81 |
| Բելառուս | 123 | 154 | 94 | 44 | 96 | 111 | 120 | 178 | 132 | 16 | 73 |
| Ուկրաինա | 139 | 105 | 174 | 103 | 134 | 62 | 141 | 177 | 116 | 46 | 139 |
| Ուզբեկստան | 145 | 73 | 143 | 68 | 167 | 170 | 105 | 162 | 163 | 48 | 113 |
| Տաջիկստան | 153 | 171 | 163 | 126 | 40 | 132 | 175 | 153 | 175 | 23 | 102 |
| ***Մերձբալթյան երկրներ*** | | | | | | | | | | | |
| Լատվիա | 20 | 25 | 86 | 92 | 83 | 12 | 49 | 38 | 22 | 3 | 62 |
| Լիտվա | 24 | 50 | 55 | 125 | 4 | 32 | 81 | 74 | 23 | 18 | 32 |
| Էստոնիա | 18 | 53 | 12 | 156 | 22 | 45 | 32 | 32 | 7 | 31 | 51 |

*Աղբյուրը՝ http://www.doingbusiness.org/, http://russian.doingbusiness.org/CustomQuery/*

Ինչպես պատկերված է Աղյուսակ 2-ում, Հայաստանին զիջում են նաև իր մյուս երկու հարևանները՝ Թուրքիան ու Իրանը: Ընդ որում, ի տարբերություն Թուրքիայի, որը զբաղեցնում է 65-րդ դիրքը և գերազանցում է Ադրբեջանին ու Ռուսաստանին, բավական ցածր վարկանիշ է գրանցվել Իրանի համար (131): Հայաստանի վարկանիշը գերազանցում է Թուրքիային 4, զիջում 5 ցուցիչներում՝ գործարարության ձեռնարկման, ներդրողների պաշտպանվածության, հարկերի վճարման, միջազգային առևտրի և պայմանագրերի ձևակերպման ցուցիչներում: 5-րդ՝ վարկավորման ցուցիչում արձանագրվել է հավասար՝ 62-ական միավոր:

[1] Ընդ որում, սեփականության գրանցման Հայաստանի արդյունքը այդ թվականին համարվում է լավագույնը ԱՊՀ և մերձբալթյան երկրների շարքում:

[2] Յուրաքանչյուր տարեկան զեկույց վերաբերում է նախորդ տարվա տվյալներին. «Գործարարություն-2007թ.» զեկույցը հիմնվում է 2006թ. տվյալների վրա և վերաբերում է 2006թ. վիճակագրությանը:

[3] Թուրքմենստանը ցուցակում ներկայացված չէ:

*Աղյուսակ 2*

*«Գործարարության» վարկանիշը 2007թ., Հայաստան և հարակից երկրներ*

| երկիր | դիրքը, ընդհ. | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վրաստան | 35 | 39 | 27 | 11 | 36 | 12 | 19 | 14 | 2 | 29 | 21 |
| Հայաստան | 46 | 44 | 72 | 48 | 2 | 62 | 81 | 137 | 133 | 64 | 43 |
| Թուրքիա | 65 | 40 | 126 | 138 | 30 | 62 | 62 | 85 | 73 | 36 | 114 |
| Ադրբեջան | 97 | 95 | 159 | 79 | 58 | 21 | 105 | 142 | 170 | 30 | 71 |
| Ռուսաստան | 112 | 45 | 172 | 102 | 44 | 156 | 81 | 126 | 155 | 19 | 81 |
| Իրան | 131 | 66 | 158 | 143 | 141 | 62 | 158 | 94 | 129 | 54 | 110 |

## *«Գործարարություն» 2008թ. նախագիծը*

Ստորև ներկայացված «Գործարարության» նախագծի 2008թ. հաշվետվությունում Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում կրկին առաջատար դիրք է զբաղեցնում՝ զիջելով միայն Վրաստանին: Նախորդ նախագծի համեմատ՝ 2008թ. հաշվետվությունում Հայաստանի վարկանիշը բարելավվել է 7, Վրաստանինը՝ 17, իսկ Ադրբեջանինը՝ ընդամենը 1 միավորով: Հայաստանը պահպանել է առաջատարի դիրքերը հարևան Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի ու Ռուսաստանի նկատմամբ:

2008թ. նախագծում Հայաստանի և նրա հարևան երկրների արդյունքները ներկայացված են ստորև:

*Աղյուսակ 3*

*«Գործարարության» վարկանիշը 2008թ., ԱՊՀ երկրներ*

| երկիր | դիրքը, ընդհ. | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վրաստան | 18 | 10 | 11 | 4 | 11 | 48 | 33 | 102 | 64 | 42 | 105 |
| Հայաստան | 39 | 47 | 73 | 48 | 2 | 36 | 83 | 143 | 118 | 64 | 42 |
| Ղազախստան | 71 | 57 | 173 | 22 | 72 | 48 | 51 | 44 | 178 | 28 | 100 |
| Մոլդովա | 92 | 81 | 153 | 93 | 46 | 97 | 98 | 111 | 122 | 17 | 82 |
| Ղրղըզստան | 94 | 49 | 152 | 74 | 16 | 68 | 33 | 152 | 177 | 32 | 128 |
| Ադրբեջան | 96 | 64 | 159 | 80 | 56 | 26 | 107 | 141 | 173 | 30 | 75 |
| Ռուսաստան | 106 | 50 | 177 | 101 | 45 | 84 | 83 | 130 | 155 | 19 | 80 |
| Բելառուս | 110 | 119 | 94 | 43 | 94 | 115 | 98 | 178 | 137 | 16 | 69 |
| Ուզբեկստան | 138 | 54 | 145 | 67 | 119 | 170 | 107 | 159 | 165 | 48 | 119 |
| Ուկրաինա | 139 | 109 | 174 | 102 | 138 | 68 | 141 | 177 | 120 | 46 | 140 |
| Տաջիկստան | 153 | 161 | 166 | 125 | 43 | 135 | 176 | 155 | 176 | 23 | 99 |

*Աղյուսակ 4*

*«Գործարարության» վարկանիշը 2008թ., Հայաստան և հարակից երկրներ*

| երկիր | դիրքը, ընդհ. | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վրաստան | 18 | 10 | 11 | 4 | 11 | 48 | 33 | 102 | 64 | 42 | 105 |
| Հայաստան | 39 | 47 | 73 | 48 | 2 | 36 | 83 | 143 | 118 | 64 | 42 |
| Թուրքիա | 57 | 43 | 128 | 136 | 31 | 68 | 64 | 54 | 56 | 34 | 112 |
| Ադրբեջան | 96 | 64 | 159 | 80 | 56 | 26 | 107 | 141 | 173 | 30 | 75 |
| Ռուսաստան | 106 | 50 | 177 | 101 | 45 | 84 | 83 | 130 | 155 | 19 | 80 |
| Իրան | 135 | 77 | 164 | 141 | 143 | 68 | 158 | 97 | 135 | 57 | 118 |

*Աղբյուրը՝ http://russian.doingbusiness.org/*

*Աղյուսակ 5*

*«Գործարարության» վարկանիշը 2008թ., լավագույն տասնյակ*

| երկիր | դիրքը, ընդհ. | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սինգապուր | 1 | 9 | 5 | 1 | 13 | 7 | 2 | 2 | 1 | 4 | 2 |
| Նոր Զելանդիա | 2 | 3 | 2 | 13 | 1 | 3 | 1 | 9 | 16 | 13 | 16 |
| ԱՄՆ | 3 | 4 | 24 | 1 | 10 | 7 | 5 | 76 | 15 | 8 | 18 |
| Հոնկոնգ | 4 | 13 | 60 | 23 | 58 | 2 | 3 | 3 | 3 | 1 | 15 |
| Դանիա | 5 | 18 | 6 | 10 | 39 | 13 | 19 | 13 | 2 | 30 | 7 |
| Մեծ Բրիտանիա | 6 | 6 | 54 | 21 | 19 | 1 | 9 | 12 | 27 | 24 | 10 |
| Կանադա | 7 | 2 | 26 | 19 | 28 | 7 | 5 | 25 | 39 | 43 | 4 |
| Իռլանդիա | 8 | 5 | 20 | 37 | 79 | 7 | 5 | 6 | 20 | 39 | 6 |
| Ավստրալիա | 9 | 1 | 52 | 8 | 27 | 3 | 51 | 41 | 34 | 11 | 14 |
| Իսլանդիա | 10 | 14 | 23 | 42 | 8 | 13 | 64 | 27 | 11 | 4 | 12 |

*Աղյուսակ 6*

*«Գործարարության» վարկանիշի դինամիկան 2007-2008թ., Հարավային Կովկաս և Թուրքիա*[1]

| Ցուցիչ | Վրաստան | | | Հայաստան | | | Ադրբեջան | | | Թուրքիա | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2008 | 2007 | *փոփոխ.* | 2008 | 2007 | *փոփոխ.* | 2008 | 2007 | *փոփոխ.* | 2008 | 2007 | *փոփոխ.* |
| Դիրք, ընդհ. | 18 | 35 | *17* | 39 | 46 | *7* | 96 | 97 | *1* | 57 | 65 | *8* |
| 1. գործարար. ձեռնարկում | 10 | 39 | *29* | 47 | 44 | *-3* | 64 | 95 | *31* | 43 | 40 | *-3* |
| 2. լիցենզավորում | 11 | 27 | *16* | 73 | 72 | *-1* | 159 | 159 | *0* | 128 | 126 | *-2* |
| 3. աշխատուժի վարձակալ. | 4 | 4 | *0* | 48 | 48 | *0* | 80 | 79 | *-1* | 136 | 138 | *2* |
| 4. սեփականութ. գրանցում | 11 | 18 | *7* | 2 | 2 | *0* | 56 | 58 | *2* | 31 | 30 | *-1* |
| 5. վարկավորում | 48 | 62 | *14* | 36 | 62 | *26* | 26 | 21 | *-5* | 68 | 62 | *-6* |
| 6. ներդրողի պաշտպանվ. | 33 | 120 | *87* | 83 | 81 | *-2* | 107 | 105 | *-2* | 64 | 62 | *-2* |
| 7. հարկերի վճարում | 102 | 103 | *1* | 143 | 137 | *-6* | 141 | 142 | *1* | 54 | 85 | *31* |
| 8. միջազգային առևտուր | 64 | 59 | *-5* | 118 | 133 | *15* | 173 | 170 | *-3* | 56 | 73 | *17* |
| 9. պայմանագրի իրագործում | 42 | 42 | *0* | 64 | 64 | *0* | 30 | 30 | *0* | 34 | 36 | *2* |
| 10. ձեռնարկութ. լուծարում | 105 | 87 | *-18* | 42 | 43 | *1* | 75 | 71 | *-4* | 112 | 114 | *2* |

*Աղբյուրը՝ http://rru.worldbank.org/businessplanet/*

[1] Աղյուսակում նշված յուրաքանչյուր ցուցիչ ցույց է տալիս տվյալ երկրի զբաղեցրած դիրքն այլ երկրների շարքում. յուրաքանչյուր ցուցչի համար լավագույն ցուցանիշը 1-ն է, վատագույնը՝ 178: Օրինակ, 2008թ. Վրաստանը առաջին՝ *գործարարության ձեռնարկում* ցուցիչում եզրափակում է լավագույն տասնյակը՝ զբաղեցնելով 10-րդ դիրքը 178 երկրների շարքում:

*Գրաֆիկ 1*

*2008թ. «Գործարարության» վարկանիշ. Հայաստանը գլոբալ աշխարհում (178 երկիր)*




*Աղբյուրը՝ http://www.doingbusiness.org/*

***Կարեն Վերանյան***
***«Նորավանք» հիմնադրամ***